թիւնը։ Եւ ահա, փետր. 20–ին, Երեւանն ևս դարձաւ թատերավայր յուզումնալից դէպքերի։ Ժամը 3–ին, առանց մի պատճառի, սկսուեց տաք հրացանաձգութիւն հայերի և թուրքերի միջև, որ տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 7–ը և շարունակուեց յաջորդ օր առաւօտեան էլ։ Միայն երկու կողմերի ներկայացուցիչների պաղարիւնութեան և Արամի ու Դրօի ջանքերի շնորհիւ կարելի եղաւ փրկել քաղաքը անդարմանելի աղէտից. փետր. 21–ին նահանգի զօրքերի հրամանատար Փիրումեանի նախագահութեամբ գումարուեց երկու ազգի ներկայացուցիչներից և քաղաքի ու զօրամասերի պատգամաւորներից մի ժողով, որը միաձայնութեամբ որոշեց քաղաքը յայտարարել պատերազմական դրութեան մէջ, կազմել ռազմա–յեղափոխական դատարան քաղաքացիների և զինուորների համար առանձին–առանձին, բանալ ճանապարհները՝ ապահովելու համար զօրամասերի մեկնումը ռազմաճակատ և այլն։ Նիստի վերջին, Մահմետ. Ազդ. Խորհուրդը պաշտօնապէս յայտարարեց, որ ինքը անկարող է զսպել թուրքերին նահանգի մի քանի մասերում և խնդրում է հայ զինուորական մասերի աջակցութիւնը։ Վճռուեց, զինուորական մասեր փոխադրելիս, հետները ուղարկել մահմետական պատուիրակներ՝ համոզելու համար թուրքերին, որ բանան ճանապարհները, և միայն չենթարկուելու դէպքում գործադրել զէնքի ոյժ։

Այս առթիւ, հայ և թուրք ներկայացուցիչները միասին, հեռագրեցին Անդրկ. Կոմիսարիատին, թէ —

Երևանի նահանգի դէպքերի համար հայ և մահմետական ազգային խորհուրդներն ու պատասխանատու գործիչները խորհրդակցութիւն գումարեցին և միաձայնութեամբ որոշեցին ձեռք առնել ամէն միջոց՝ վերջացնելու համար անկարգութիւնները։ Խորհրդակցութեան մասնակցում էին Արամը, նահանգային կոմիսար Սահակ Թորոսեանը, նահանգային գործադիր կոմիտէի նախագահը, Երեւանի քաղաքագլուխ Թ. Թոշեանը, նահանգային ախունդ Կաղիեւը, Միրզա Հիւսէին Զադէն, Սէյիդ Քեազումովը, Միրզա Ալաքպէր Ախունդ զադէն, Երեւանի մահմ. ազդ. ժողովի անդամներ Աղաբարէգովը, Միր Սադրկովը, Ֆիզուլլաբէգովը։ Կողմերը համաձայնեցին՝ թուրքերը՝ բանալ ճանապարհները, Երևան—Զուլֆա երկաթուղին, իսկ հայերը խոստացան՝ վերջ տալ զօրամասերի գործողութիւններին։

Քաղաքի համաձայնութիւնը, սակայն, ո՛չ մի նշանակութիւն չունէր գաւառի համար։ Այնտեղ դէպքերը ընթանում էին իրենց ճանապարհով. թուրքերի սանձարձակութիւնները օր օրի վրա սաստկանում էին։ Անհրաժեշտ էր ձեռք առնել վճռական միջոցներ։ Արամը, զօր. Սիլիկեանը, զօր. Փիրումեանը և Դրօն խորհրդակցութիւն արին և որոշեցին, օրինակ տալու համար, պատժել Ուլուխանլուն և բանալ երկաթուղային հաղորդակցութիւնը։ Խորհրդակցութեան միջոցին լուր ստացուեց, որ Կողբը պաշարուած է, Դաշբուռունի վիճակը շատ ծանր է, և Իգդիրի Ազգ. Խորհուրդը օգնութիւն է խնդրում։

Յաջորդ օր, փետրուար 22–ի առաւօտեան, 6րդ և պարտիզանական գնդերից մի–մի զումարտակ և 2 թնդանօթ Կլիչի մարտակոցից շարժուեցին դէպի Ուլուխանլու և դիրքեր բռնեցին գիւղի մօտ։ Արամի առաջարկու–